

## Մաքսային արժեքի որոշման գործընթացը «Թափանցիկ» է

ՀՀ իշխանություններն առիթով և անառիթ պնդում են, թե իրենց գործունեությունը ամենատարբեր ոլորտներում թափանցիկ է և հաշվետու, որ այդ առումով մենք համապատասխանում ենք միջազգային չափանիշներին:

Մեկ ոլորտի օրինակով փորձենք ցույց տալ, որ գործնականում դա այնքան էլ չի համապատասխանում իրականությանը:

Մաքսային ոլորտում որպես խնդրահարույց և առանցքային խնդիր դեռևս մնում է «Գործարքի գնի» մեթոդի կիրառության խնդիրը. մաքսային մարմինները, առավել հաճախ, «Գործարքի գնի» մեթոդ չեն կիրառում մաքսային արժեք որոշելիս և առաջնորդվում են այսպես կոչված «Հսկիչ գներով»:

Խնդիրը մասնավորապես առաջանում է Եվրասիական տնտեսական միությունից (այսուհետ՝ ԵԱՏՄ) ավտոտրանսպորտային միջոց ներմուծելու ժամանակ: Այդ խնդրով Ա.Բ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղ (այսուհետ՝ Սախարովի կենտրոնի Շիրակի մասնաճյուղ) դիմող քաղաքացիները դժգոհում են, որ մինչ մեքենա գնելը և ՀՀ ներմուծելը, իրենք որևէ կերպ չեն կարող տեղեկանալ թե ի՞նչ մաքսային արժեքով է հաշվարկվելու, որը և դժվարացնում է նախապես ծախսերի հաշվարկ կատարելու գործընթացը:

Հիշեցնենք, որ 2016թ-ի մարտի 30-ից հետո ԵԱՏՄ երկրներից ֆիզիկական անձանց կողմից ավտոմեքենա ներմուծելու դեպքում 20% ավելացած արժեքի հարկը չի գանձվում /Ավելացված արժեքի հարկի մասին ՀՀ օրենքի 3հ. 3/1 կ գ ենթակետ/: Սակայն, փոխարենը՝ 10-օրյա ժամկետում ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձինք պարտավոր են վճարել բնապահպանական վճար: Իսկ բնապահպանական վճարի հաշվարկի հիմքում ընկած է մաքսային արժեքի հաշվարկը, որը և անհասանելի է հասարակ քաղաքացու համար:

Այսպես.

**Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ներմուծման համար ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկվում է այդ ապրանքների մաքսային արժեքից՝ «Բնապահպանական վճարի դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույքաչափերով:**

Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է արժեքային (ադվալորային) մաքսային վճարների հաշվարկման, արժեքային ձևով սահմանված ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման և մաքսային վիճակագրության վարման նպատակով:

Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքի մաքսային արժեքը գործարքի գինն է, այսինքն՝ այն գումարը, որը փաստացի վճարվել է, ենթակա է վճարման կամ պետք է վճարվեր ապրանքը ներմուծման երկիր արտահանելու նպատակով ձեռք բերելու և մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը տեղափոխելու համար:

Գոյություն ունեն մաքսային արժեքի որոշման **6 մեթոդներ**: Դրանք են՝

1. մաքսային արժեքի որոշումն՝ ըստ գործարքի գնի մեթոդի,
2. մաքսային արժեքի որոշումն՝ ըստ նույն ապրանքների գործարքի գնի,
3. մաքսային արժեքի որոշումն՝ ըստ համանման ապրանքների գործարքի գնի,
4. Հայաստանի Հանրապետության ներքին շուկայում ապրանքի միավորի իրացման գնի հիման վրա ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքի որոշում,
5. մաքսային արժեքի որոշումն՝ ըստ հաշվարկային արժեքի,
6. մաքսային արժեքի որոշման պահուստային մեթոդ:

Այս մեթոդներից, ըստ էության, միայն մեկն է (մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդ) որոշվում և հայտարարագրվում հայտարարատուի կողմից: Միաժամանակ մաքսային օրենսգրքով (87 հոդված) սահմանված է նաև, որ մաքսային մարմինները իրավունք ունեն ներկայացված փաստաթղթերի անարժանահավատ լինելու դեպքում (որը մաքսային մարմնի կողմից չհիմնավորված է և ոչ իրավաչափ) չընդունել այս մեթոդով հաշվարկված մաքսային արժեքը՝ որպես հիմք մաքսային վճարներ հաշվարկելիս, որի դեպքում կիրառվում են մաքսային արժեքի որոշման մյուս մեթոդները՝ ըստ վերոնշյալ հերթականության:

Մաքսայինի բարեփոխումների շրջանակում, մոտ 3 տարի առաջ, Պետեկամուտների կոմիտեի կայքում (customs.am) տեղադրվեց հաշվիչ համակարգ, որով հնարավոր էր գրեթե հստակ հասկանալ, թե ինչքան կկազմի ներկրվող մեքենայի մաքսային արժեքը: Մի երկու ամիս հետո կայքից ցուցակը հանվեց: Դրա փոխարեն քաղաքացիներին առաջարկեցին զանգով տեղեկանալ: Իսկ ի՞նչն է խանգարում, որ դա քաղաքացիներին հայտնի լինի, որ նախապես հաշվարկեն իրենց եկամուտներն ու ծախսերն ու որոշեն՝ ներմուծումը ձեռնտու է, թե ոչ:

Այդ հարցի պարզաբանման նպատակով Սախարովի կենտրոնի Շիրակի մասնաճյուղը 2016թ-ի հուլիսի 21-ին պաշտոնական գրությամբ դիմել էր ՀՀ պետական եկամուտների կոմիտե և խնդրել նաև կցել հաստատված փաստաթղթի պատճենը, որում նշված է հսկիչ գնի մեթոդով որոշված մաքսային արժեքը և հաշվարկման կարգը (որը սակայն ՊԵԿ-ի պատասխանին կցված չէր և որևէ անդրադարձ էլ չէր արված):

Որպես հիմնավորում ՀՀ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ Ա.Աֆրիկյանի կողմից 27.07.2016-ի գրությամբ հայտնվել է, որ «այդ հարցի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ աշխարհի որևէ պետության մաքսային արժեքների կողմնորոշիչ չափանիշներ չի հրապարակվում»: **Ուստի և որոշվել է այդ տեղեկությունները հանել կայք-էջից:**

Ինչ վերաբերում է մաքսային արժեքների չափանիշներին, գրությամբ հայտնվել է. «Ցանկացած քաղաքացի կարող է այցելել ԱՄՄՁՄ մաքսատան (ավտոմաքսատուն) և ամփոփ տարբերակով, կոնկրետ պահի դրությամբ փոփոխություններով հանդերձ, մաքսատան շենքում, դրա համար հատուկ հատկացված վայրում՝ պատին փակցված ստենդի միջոցով, մաքսատան աշխատանքային ժամերի ընթացքում, ծանոթանալ ավտոմեքենաների մաքսային արժեքների չափանիշներին»:

Իրականությունն այն է, որ այցելել բառը ներկայումս ունի նոր իմաստ, կիրառություն, այն է՝ այցելել կայք: Կարծում եմ, որ ակնառու է տարբերությունը, երբ Սյունիքի, Տավուշի կամ Գեղարքունիքի բնակիչը սեփական տանն այցելում է համապատասխան կայք, կամ այցելում է

Երևան այդ տեղեկությունը ստանալու համար: Այդպիսի այցելությունը կարող է դառնալ մի քանի օր տևող ճանապարհորդություն՝ միջոցների վատնումով:

Նշված տեղեկատուն, որը գտնվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձեռակերպումների մասնագիտացված մաքսատան «Նորագավիթ» մասնաճյուղում, մեքենա ներկրելու ցանկություն ունեցող ոչ բոլոր քաղաքացիների համար է հասանելի, որովհետև այդ տեղեկատուն սպասարկում է հիմնականում նրանց, ովքեր արդեն մեքենան ներկրել են և մաքսագերծման գործընթաց անցնելու համար արդեն մուտք են գործել մաքսատան տարածք:

Գրությամբ նաև հայտնվել էր, որ «ՀՀ ներմուծվող ավտոմեքենաների մաքսային արժեքների վերաբերյալ, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախաձեռնությամբ քաղաքացիները մաքսային արժեքի և մաքսագերծման վճարների չափի վերաբերյալ տեղեկատվություն կարող են ստանալ նաև ՊԵԿ հեռախոսագանգերի սպասարկման կենտրոնից՝ զանգահարելով 060-54-44-44 հեռախոսահամարով»:

Նշեմ, որ թե՛ զծի օգնությամբ միայն Մաքսային օրենսգրքի և Բնապահպանական վճարի դրույքաչափերի մասին օրենքի որոշ հոդվածների հղումներ կարողացանք ստանալ, այլ ոչ թե մեքենաների մաքսային արժեքի մասին տեղեկատվություն:

Վերոգրյալից ելնելով, պետք է փաստել այն, որ շարքային քաղաքացին չի կարող տիրապետել այդ ամբողջ տեղեկատվությանը և կարճ ժամկետներում հնարավորություն ունենալ իր իրավունքները պաշտպանել մաքսային մարմիններում:

Զարմանալի է, որ համապատասխան պետական մարմինները, որոնք պատասխանատու են ապրանքների մաքսային արժեքի որոշման ոլորտում թափանցիկ և հրապարակային իրավական ընթացակարգերի համար, քաղաքացիներին ստիպում են կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք չեն համապատասխանում պետական ծառայություններ մատուցելու ժամանակակից պահանջներին: Հուսով ենք, որ այդ մարմինները անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն բնակչությանն օբյեկտիվ տեղեկատվություն տրամադրելու տեխնոլոգիաների կատարելագործման ուղղությամբ:

Նյութի հեղինակ՝

Վանուհի Գասպարյան,

Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների

պաշտպանության հայկական կենտրոնի

Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղի իրավաբան